կոչի Նոր Կիրակի և Կարմիր Կիրակի։ Եւ սկսաք ըղ-
Խորհուրդ խորին, եւ զգեստաւորեցաւ Վարդապետն
եւ ելաւ ի դուրս բազում ուխտիւ՝ սարկաւագօք եւ
դպրօք, և բերին յառաջ զԽաչատուրն որ էր դպիր,
եւ երեսն զԲ աստիճանն եւ զՏէր Ոհանի որդի զԳրի-
գորն և ձեռնադրեաց զերկոսին և օծեց բազում վա-
ռօք և մեծաւ պատվով, որ ոչ կարեմ պատմել զկարգ
և զսահման որ եդեալ սուրբ նախնիքն մեր և երանելի
հոգիքն. և զվառս և զմեծութիւնս քահանայիցն զի՛տ
ի ձեռնադրութեան գիրքն և տե՛ս։ Յաւուրն Դ ժամուն
ապա ելաք յեկեղեցոյն՝ կատարելով զպատարագն։
Եւ յետոյ ի Սուրբ Գէորգ գնացաք նշանօրհնէք խսու-
մի աղջկանն եւ աւրհնեցաք ի մէջ եկեղեցոյն զնշանն
եւ յետոյ ելեալ գայաք, եւ Մղտեսի Եաղուպն բա-
զում երգմամբ եւ բազում աղաչանօք տարաւ զմեզ
ի տուն, եւ նստեալ ի տեղն Բ և Գ ժամ և ելեալ ե-
կաք ի տուն և Տէրտէրն գնաց ի յԱստուածածին։ Եւ
յետոյ ես ելեալ գնացի ի յԱստուածածին. դաս կ'ա-
սէր Վարդապետն զբան Իմաստնոյն Սողոմոնի։ Եւ
յետ ժամուն գնացաք ի հետ Վարդապետին եւ զհացն
ի հոն կերաք, և երեկոյացաւ. ես և Տէր Յակոբն ե-
լեալ եկաք ի տուն մեր եւ Տէրտէրս եւ Տէր Յովա-
նէսն ի Թէրէստէճի գնացին աւրհնել զխանութ նոցա։
Յայսմ աւուր նզովեալ և անիծեալ Թըլթըլն հետ վար-
պետիս կռվեալ է, սուտ զբնաբանն քիւրէքճու ըս-
տակն պատճառելով, և սա բազում նզովք և անէծք է
ասացեալ։ Զը մնայ միթէ և չը համբերէ Աստուած
վասն չար հպարտութեան նորա։ Եւ օրս ի Սուրբ Լու-
սաւորիչ Թադէոս[1]) վարդապետն զնորգեղի երէց մի
աւրհնեց և ե Զ տղայ՝ դպիր, թէսքէրէոնն մեր Վար-
դապետին։

1) Թաթէոս.